

ՀՀ ԳԱԱ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ  
ԻՆՍԻՏՈՒԹԵԱ

---

Թառումյան Լուսինե Սերոբի

Բիզնես պլոցեսների արտադրողականության  
առաջնային բնութագրիչների գնահատման համակարգ

Ե.13.04 «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի  
մաթեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ  
տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

Սեղմագիր

Երևան – 2012

---

ИНСТИТУТ ПРОБЛЕМ ИНФОРМАТИКИ И  
АВТОМАТИЗАЦИИ НАН РА

---

Тарумян Лусине Сероповна

Система оценки ключевых характеристик  
производительности бизнес процессов

Автореферат

диссертации на соискание ученой степени кандидата  
технических наук по специальности  
05.13.04 – “Математическое и программное обеспечение  
вычислительных машин, комплексов, систем и сетей”

Ереван – 2012

Ասլենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝

Փ.մ.գ.դ. Ս.Կ. Շուքուրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Փ.մ.գ.դ. Է.Մ. Պողոսյան  
տ.գ.թ. Ս.Հ. Առաքելյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012թ.-ի մայիսի 3-ին, ժամը 15:00-ին ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում գործող 037 «Ինֆորմատիկա և հաշվողական համակարգեր» մասնագիտական խորհրդի նիստում հետևյալ հասցեով՝ 0014, Երևան, Պ. Անակի 1:

Ատանախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ.-ի ապրիլի 3-ին:

037 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար, Փ.մ.գ.դ.

Հ.Գ. Սարուխանյան

---

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:

д.ф.м.н. С.К. Шукурян

Официальные оппоненты:

д.ф.м.н. Э.М. Погосян  
к.т.н. С.Г. Аракелян

Ведущая организация:

Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 3-го мая 2012г. в 15:00 на заседании специализированного совета 037 "Информатика и вычислительные системы" Института проблем информатики и автоматизации НАН РА по адресу: 0014, Ереван, ул. П. Севака, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ИПИА НАН РА.

Автореферат разослан 3-го апреля 2012г.

Ученый секретарь специализированного  
совета 037, д.ф.м.н.

Ա.Գ. Սարուխանյան

## Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

### Ժենալի արդիականությունը

Բիզնես պրոցեսը իրենից ներկայացնում է իրար հետ որոշակիորեն կապակցված գործույթների կամ գործընթացների բազմություն, որը իրագործում է որևէ բիզնես խնդիր կամ նախատակ՝ կազմակերպության կառուցվածքում սահմանելով ֆունկցիոնալ դերեր և փոխհարաբերություններ<sup>1</sup>:

Ներկայում առաջատար կազմակերպությունները իրենց բիզնես պրոցեսները իրագործում են նեկավարման ծրագրային համակարգերի միջոցով (BPMS/WfMS), որոնք բոլոր են տախու իրագործել պրոցեսների 4 հիմնական փուլերից բաղկացած կյանքի ցիկլ՝ նախագծում, իրականացում, կատարում, մոնիթորինել:

Սուաջն փուլում բիզնես վերլուծության մասնագետը նախագծում է բիզնես պրոցեսը՝ հետազոտելով և գնահատելով այլընտրանքային սցենարները:

Իրականացման փուլում ավտոմատացվում են արոցենի այն գործողությունները, որոնք մասնակի կամ ամբողջությամբ վետը է կատարվեն կյանքում:

Կատարման փուլում համակարգը դեկալիարում է բիզնես պրոցեսի աշխատանքը: Այն նաև համարագրում է արտադրողականության ընութագրինները (KPI-key performance indicators), օրինակ՝ աշխատանքի ժամանակ (processing time), կատարման ժամանակ (processing time+waiting time), ծախսեր, եկամուտներ, շահույթ և այլն:

Մոնիթորինեգի փուլում վերլուծության մասնագետը գնահատում է ընութագրինները, հայտնաբերում պրոցեսի թերությունները և կատարման վերանայացում (reengineering):

Ներկայում կամ բազմաթիվ, մոտ 200-ից ավելի համակարգեր<sup>2</sup>, որոնք այս կամ այն չափով ապահովում են վերոհիշյալ ֆունկցիոնալարտյունը: Դրանցից ամենաարդիականն ու խոշորներից է օրինակ IBM WebSphere software<sup>3</sup> համակարգերի ընտանիքը: Կան նաև միջազգային կազմակերպություններ, որոնք մշակում են այդ համակարգերի համար ընդհանուր ստանդարտներ՝ WfMC<sup>4</sup>:

Ներկայում շուկայի զարգացման բարձր տևականը ստիպում են կազմակերպություններին լինել ճկում՝ անընդհատ կատարելագործելով իրենց բիզնես պրոցեսները: Ուստի առաջնային է դառնության համակարգերի հատկապես վերլուծության գործիքների զարգացում<sup>4</sup>:

Բիզնես պրոցեսների վերլուծության համար կիրավում է 3 հիմնական մուտեցում<sup>5</sup>, ձևական վերլուծություն, սիմուլյացիա և մոնիթորինգ: Զևական վերլուծության մեթոդների առավելություններ<sup>2,5</sup> այն է, որ նրանք բոլոր են տախու պրոցեսի թերությունները հայտնաբերել և շտկել նախազգանակ փուլում: Մոնիթորինեգի փուլում հայտնաբերված սխալները թերում են լրացնուի ծախսերի և ժամանակի կրոստի: Չնայած, որ սիմուլյացիան նույնպես կիրավում է նախազգանակ փուլում, սակայն այն կարող է թերել դեպքերի հատակինա<sup>2,5</sup>: Ուստի ներկայում մեծ հետաքրքրություն են ներկայացնում ձևական վերլուծության մեթոդներով կառուցված արդյունավետ վերլուծության ալգորիթմները, սակայն այդ ոլորտի զարգացման առջև կանգնած են մի շաբա խնդիրներ, որոնց պատճառով գոյություն ունեցող համակարգերը առավելապես պարունակում են միայն սիմուլյացիայի և մոնիթորինգի գործիքներ:

Զևական վերլուծություն կատարելու համար առաջին հերթին պետք ընտրել բիզնես պրոցեսների ներկայացման ձևական մոդել: Վերջին տարիներին կատարվել են բազմաթիվ հետազոտական աշխատանքներ տարրեր ձևական մոդելների վրա, սակայն, որպես կանոն այդ մոդելները մասնագծված են կոմիկան խնդիրների լուծման համար և հաճախ որոշ

<sup>1</sup>Workflow Management Coalition, <http://www.wfmc.org>.

<sup>2</sup>Aalst W., Hee K., “Workflow Management, Models, Methods and Systems”, The MIT Press Cambridge, Massachusetts London, 2002.

<sup>3</sup>IBM, WebSphere software, <http://www-306.ibm.com/software/websphere>.

<sup>4</sup>Fischer L. “2010 BPM and Workflow Handbook, Spotlight on Business Intelligence” Future Strategies Inc, ISBN-10: 0981987052 ISBN-13: 9780981987057, 2010.

<sup>5</sup>Jonkers H., Franken H., “Quantitative Modelling and Analysis of Business Processes”. In Simulation in Industry: Proceedings of the 8th European Simulation Symposium, vol. I, pp. 175-179, Genoa 1996.

մասերով չեն համապատասխանում ստանդարտներին: Ուստի անհրաժեշտություն կա մշակել այնպիսի ձևական մոդել, որը մի կողմից կապարունակի ձևական վերլուծության համար անհրաժեշտ կառուցվածքներ, իսկ մյուս կողմից կիսամապատասխանի ստանդարտներին, որը բույս կտա մշակված լուծումները հեշտությամբ ինտեգրել արդի համակարգերում:

Մշակված մոդելը պետք է բույլ տա նաև կատարել ցիկլիկ բիզնես արցեսների արդյունավետ վերլուծություն, քանի որ այդ պրոցեսները լայն կիրառություն ունեն: Սակայն, ինչպես հայտնի է, ոչ կառուցվածքային ցիկլերի առկաությունը բերում է պրոցեսի ձևական նկարագրման, սեմանտիկայի մի շարք բարդությունների<sup>6</sup> և էապես խոշընդոտում է վերլուծության արդյունավետ ալգորիթմների մշակմանը: Այդ պատճառով, մինչ այժմ, շատ հետազոտական աշխատանքներ կատարված են միայն ացիկլիկ կամ միայն խիստ որոշակի կառուցվածք ունեցող ցիկլերով պրոցեսների համար: Կան նաև աշխատանքներ<sup>7</sup>, որտեղ առաջարկվում է ձևափոխել բիզնես պրոցեսները՝ ցիկլերը դարձնելով կառուցվածքային: Սակայն առաջարկված մերորդ կիրառելի է միայն գուգակու ճյուղեր չպարունակող ցիկլերի համար, իսկ գուգակի հետոթյունը լայնորեն կիրավում է բիզնես պրոցեսներում:

*Չուզակեն ճյուղերի անողողակի փոխազդեցությունները և բիզնես պրոցեսների այլ կառուցվածքային առանձնահասկությունները (օր. սիմխրոնիզացման կետեր) նույնպես լրացնուի խնդիրներ են ստեղծում ընութագրիչների վերլուծության համար:*

Նոյմիսկ վերոհիշյալ կառուցվածքները չպարունակող բիզնես պրոցեսների համար ընութագրիչների վերլուծության խնդիրը ամբողջապես լուծված չէ: Մինչ այժմ հրապարակված աշխատությունների գերակշիռ մասում խնդիրը լուծված է միայն այն պրոցեսների համար, որոնց դեկավարման անցումների հավանականությունները հայտնի են, իսկ աշխատությունների մնացած մասում խնդիրը լուծված է միայն ացիկլիկ պրոցեսների համար: Նշված հավանականությունները ճշգրտվում են միայն բիզնես պրոցեսների կատարման փուլից հետո, ուստի առաջարկված մերորդները նախագծման փուլում կիրառելի չեն:

## Աշխատանքի նախառական

- Բիզնես պրոցեսների համար մշակել ստանդարտներին համապատասխանող ձևական մոդել, որը կապարունակի վերլուծության մաքենատիկական հիմնավորման համար անհրաժեշտ կառուցվածքներ:
- Մշակել ցիկլիկ բիզնես պրոցեսների արյունավետ վերլուծության ընդհանուր մերորդ, որը կիրառելի կլինի և՝ գուգակեն ճյուղեր, և՝ ոչ կառուցվածքային ցիկլեր պարունակող պրոցեսների համար:
- Առաջարկել բիզնես պրոցեսների արտադրողականության ընութագրիչների վերլուծության ալգորիթմներ, որոնք կիրառելի կլինեն նախագծման փուլում՝ երբ դեկավարման հավանականությունները հայտնի չեն:
- Մշակել վերլուծության ծրագրային համակարգ՝ իրականացնելով առաջարկված ալգորիթմները: Փորձարկումների միջոցով հիմնավորել առաջարկված լուծումների կիրառման արյունավետությունը:

## Հետազոտման օրյեկտները

Հետազոտության օրյեկտներ են հանդիսանում բիզնես պրոցեսների ձևական ներկայացնումը և նրա տարրերը՝ գործույթներ, կատարողներ, ցիկլեր, ընութագրիչներ և այլն:

## Հետազոտման մեթոդները

Աշխատանքում օգտագործված են գործույթների հետազոտման, բազմությունների, գրաֆների տեսությունների, ալգորիթմների կառուցման և վերլուծության մերորդները:

<sup>6</sup> Aalst W., Desel J., Kindler E., “On the semantics of EPCs: A vicious circle”. In Proceedings of the Workshop on EPK. Pp. 71-79, Trier 2003.

<sup>7</sup> Koehler J., Hauser R., “Untangling Unstructured Cyclic Flows - A Solution based on Continuations”, 6th Int. Conference on Cooperative Information Systems CoopIs, Springer LNCS 3290, pp. 121-138, 2004.

## Արդյունքների գիտական նորությունը

- Ընդլայնվել է IBM's MQSeries Workflow<sup>8</sup> բիզնես պրոցեսների ձևական մոդել՝ վերլուծության համար անհրաժեշտ կառուցվածքներով, և համապատասխանեցվել ստանդարտներին:
- Մշակվել է ոչ կառուցվածքային ցիկլերով բիզնես պրոցեսների համարժեք ձևափոխության մեթոդ՝ LOOP ցիկլերով պրոցեսների, որը կիրառելի է B1T<sup>9</sup> գրադարանի բոլոր պրոցեսների համար:
- Մշակվել է LOOP ցիկլերով պրոցեսների բնութագրիչների վերլուծության ընդհանուր մեթոդ, որը կիրառելի է ոչ միայն հայտնի, այլև անհայտ ղեկավարման հավանականություններով պրոցեսներին: Մերորդ բոլոր է տախու ացիկլիկ պրոցեսների համար նշակած վերլուծության ալգորիթմները ընդլայնել ցիկլիկ պրոցեսների համար՝ պահպանելով ալգորիթմների բարդությունը:
- Մշակվել են բիզնես պրոցեսների ստատիկ և դինամիկ (կատարումից կախված) ժամանակային կրիտիկական ճամապարհների որոշման ալգորիթմներ՝ իմմնված զուգակեռ ճյուղերի փոխազդեցությունների վերլուծության վրա: Սահմանվել է միարժեք փոխազդեցություններով պրոցեսների դասը, որի վրա ալգորիթմները տախու են խնդրի ամբողջական լուծում:
- Տրվել են բիզնես պրոցեսների առաջնային ֆինանսական բնութագրիչների ձևական սահմանումներ և մշակվել են դրանց որոշման ալգորիթմներ:

## Ստացված արդյունքների կիրառական նշանակությունը

Ստացված արդյունքների, մշակված ալգորիթմների հիման վրա կառուցվել է բիզնես պրոցեսների վերլուծության ծրագրային համակարգ:

Քանի որ համակարգը պահովում է WfMC ստանդարտներին համապատասխան փորձատերի մշակում, ուստի համակարգի միջոցով հնարավոր է վերլուծել ստանդարտներին բավարարող կամայական այլ համակարգության համապատասխանությունը:

Մշակված համակարգը փորձական է IBM-ի կողմից մշակված B1T<sup>9</sup> պրոցեսների գրադարանի վրա: Գրադարանը բաղկացած է 5 ենթագրադարաններից և պարունակում է 735 բիզնես պրոցեսներ՝ բանկային, ապահովագրության, հաճախորդների սպասարկման, ապրանքների նատակարարման, շինարարության և այլ լուրջներից: Արյունքները համեմատվել են արդի ամենազարգացած համակարգերից մեջից՝ վերլուիչյալ IBM WebSphere software ընտանիքի Business Modeler համակարգի փորձարկման արդյունքների հետ: Համեմատությունը ցույց է տրվել աշխատանքում մշակված մեթոդների և ալգորիթմների արդյունավետությունն ու առավելությունները:

## Ներրումներ

Աշխատանքի արդյունքների գործնական օգտագործումը և նրանց արժեքը արտացոլված են 1. «Հայկական ծրագրեր» ընկերությունում ներդրման համապատասխան արձանագրությունում:  
2. «Կոնվերս բանկ» ընկերությունում ներդրման համապատասխան արձանագրությունում:

## Պաշտպանության ներկայացվածք են հետևյալ որությունները

- Բիզնես պրոցեսների IBM's MQSeries Workflow<sup>8</sup> ձևական մոդելի ընդլայնումը:
- Ոչ կառուցվածքային ցիկլերով բիզնես պրոցեսների համարժեք ձևափոխության մեթոդ՝ LOOP ցիկլերով պրոցեսների:

<sup>8</sup>Leymann F., Roller D., “Production Workflow: concepts and techniques”. Prentice Hall, Inc. Upper Saddle River, New Jersey, 2000.

<sup>9</sup>Fahland D., Favre C., Jobstmann B., Koehler J., Lohmann N., Völzer H., Wolf K., “Instantaneous Soundness Checking of Industrial Business Process Models”, 7th Int. Conference on Business Process Management, Springer LNCS 5701, pp. 278-293, 2009.

- Ացիկլիկ բիզնես պրոցեսների համար ծշակված վերլուծության ալգորիթմների ընդայնման մերողը՝ ցիկլիկ պրոցեսների համար, որը կիրառելի է ոչ ֆիզյան հայտնի, այլև անհայտ դեկավարման հավանականություններով պրոցեսներին:
- Քիզնես պրոցեսների ստատիկ և դինամիկ (կատարումից կախված) ժամանակային կրիտիկական ճանապարհների որոշման մերողները՝ հիմնված զուգահեռ ճյուղերի փոխազդեցության վերլուծության վրա:
- Քիզնես պրոցեսների առաջնային ֆինանսական բնուրագրիչների որոշման ալգորիթմները:
- Առաջարկված մերողների հիման վրա կառուցված քիզնես պրոցեսների վերլուծության ծրագրային համակարգը:

## Ապրոբացիս և հրապարակումներ

Առենախոսության հիմնական արդյունքները ու դրույթները քննարկվել և գեկուցվել են ԵՊՀ «Ալգորիթմական լեզուների ամբիոնի» սեմինարների ընթացքում (2003-2007 թթ.), ԵՊՀ «SS կրթական և հետազոտական կենտրոնի» սեմինարների ընթացքում (2007-2010թթ.), Առաջատար սիմուլյացիոն տեխնոլոգիաների միջազգային կոնֆերանսին ASTC'2003 (Օլյանդո, ԱՄՆ), Հաշվողական գիտուրյունների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կոնֆերանսներին CSIT2005, CSIT2011 (Երևան, Հայաստան), I3M'2005 Սիցազգային մուլտիկոնֆերանսի շրջանակներում կայացած Եվրոպական 17-րդ սիմուլյացիոն սիմպոզիումին ESS'2005 (Մարտե, Ֆրանսիա):

Աշխատանքի հիմնական արդյունքները հրապարակված են 5 հոդվածներում, որոնց ցանկը բերված է սեղմագրի վերջում:

## Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը

Առենախոսությունը բաղկացած է առաջարանից, չորս գլուխներից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 144 էջ է, օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 86 անուն:

## Աշխատանքի բռվաճությունը

Առաջարանում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը: Ներկայացված է հետազոտությունների գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

**Առաջին գլխում** նկարագրված են բիզնես պրոցեսների մոդելավորման, դեկավարման և վերլուծության ընդհանուր սկզբունքները: Նկարագրված են ալգորիթմների վերլուծության մերողները և խնդիրները: Վերլուծված են այլ ասպարեզում կատարված հետազոտական աշխատանքները և արդի ամենազարգացած համակարգերի փունկցիոնալ հնարավորությունները: Զևսկերպված է աշխատանքի ընդհանուր խնդրի դրվագը:

**§1.1-ում** մեջբերված են բիզնես պրոցեսների և նրանց դեկավարման համակարգերի միջազգային ստանդարտներով ընդունված սահմանումները, նկարագրված են այդ համակարգերի աշխատանքի հիմնական սկզբունքները, նպատակները և նշանակությունը: Նկարագրված է բիզնես պրոցեսների կենսացիկլը, որը բաղկացած է 4 հիմնական փուլերից՝ մոդելավորում և նախագծում, իրականացում, կատարում, մոնիթորինգ:

**§1.2-ում** նկարագրված են բիզնես պրոցեսների վերլուծության 3 հիմնական մերողները ձևական վերլուծություն, սիմուլյացիա և մոնիթորինգ: Տրված է այդ մերողների համեմատական վերլուծությունը և հիմնավորված է առաջին մերողի զարգացման անհրաժեշտությունը:

Վերլուծված են վերջին տարիներին ձևական վերլուծության կիրառմամբ կատարված հետազոտությունները և արդի ամենազարգացած համակարգերի փունկցիոնալությունը:

**§1.3-ում** ներկայացված է ժամանակային վերլուծության խնդիրը: Վերլուծված են այդ ասպարեզում կատարված հետազոտական աշխատանքները և առկա խնդիրները:

**§1.4-ում** ձևակերպված են արտադրողականության բնուրագրիչների վերլուծության ոլորտում առկա խնդիրները և աշխատանքի ընդհանուր խնդրի դրվագը.

1. Անհրաժեշտ է մշակել բիզնես պրոցեսների ձևական մոդել, որը կհամապատասխանի ստանդարտներին կսպառունակի վերլուծության արդյունավետ ալգորիթմների մշակման համար անհրաժեշտ կառուցվածքներ (հատկապես ցիկլիկ պրոցեսների համար):
2. Անհրաժեշտ է մշակել բիզնես պրոցեսների արտադրողականության չափամիջների վերլուծության ընդհանուր մերոդ և կիրառել այն առաջնային բնորդագրիչների համար.
  - Ժամանակային վերլուծություն՝ դիտարկելով կատարողների կապերը, բիզնես պրոցեսների կառուցվածքային միավորները և վերջնաժամկետի գաղափարը,
  - Եկամուտների, ծախսների և շահույթի վերլուծություն՝ դիտարկելով բիզնես պրոցեսների կառուցվածքային միավորները:
 Առաջարկվող բոլոր ալգորիթմների կոռեկտությունը անհրաժեշտ է տեսականորեն հիմնավորել և գնահատել նրանց բարդությունները:
3. Անհրաժեշտ է մշակել ծրագրային համակարգ, որում կիրականացվեն առաջարկված ալգորիթմները:
  - Համակարգը պետք է հնարավորություն տա վերլուծել ստանդարտներին համապատասխանող կամայական այլ համակարգում նախագծված բիզնես պրոցեսները,
  - Այն պետք է փորձարկվի բիզնես պրոցեսների հայտնի գրադարանների կամ,
  - Փորձնական արդյունքները պետք է համեմատվեն այլ համանանան համակարգերի արդյունքների հետ, որով փորձնականորեն կիմնանալուի առաջարկված մեթոդների արդյունավետությունը:

**Երկրորդ գլխում** ներկայացված է բիզնես պրոցեսների նկարագրման նոր ընդլայնված Workflow մոդելը, որիվ է նրան մարենաւորելու նկարագրությունը, ինտերակտուացիայի ազդրիթմը: Ներկայացված է նաև ցիկլիկ պրոցեսների մոդելավորման մեթոդը, ոչ կառուցվածքային ցիկլերի ձևափոխման ալգորիթմը և ապացուցված է նրա կոռեկտությունը:

**§2.1 –ում** հիմնավորված է IBM-ի կողմից նշակված MQSeries Workflow ձևական մոդելի ընդլայնման անհրաժեշտությունը: Հենքային մոդելի ձևական նկարագրությունը ավելի պարզ դարձնելու նպատակով հերիճնակմերը չեն ներառել որոշ կառուցվածքներ, սակայն, քանի որ դրանք վերլուծության տեսանկյունից էական նշանակություն ունեն և համապատասխանում են ստանդարտներին, ուստի սույն աշխատանքում կատարվել է հենքային մոդելի ընդլայնում:

Մոդելի հիմնական կառուցվածքային միավորներն են՝ գործույթները (Activities), դեկավարման անցումները (control connectors), տվյալների փոխանցման կապերը (data connectors), գործույթների կատարողները: Կամայական դեկավարման անցման կցված է արեղիկատ, որը դեկավարման փոխանցման պայմանն է:

Ընդլայնված մոդելում, Workflow ստանդարտին համապատասխան, կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- Ներմուծված է AND և XOR ճյուղավորման և միակցման գործույթների տարրերակումը: AND գործույթները օգտագործվում են պրոցեսի գուգահեռ ճյուղերի նկարագրման և սինխրոնիզացիայի համար, իսկ XOR գործույթները՝ այլընտրանքային ճյուղերի համար:
- Ներմուծված են ալյուրի, գործույթի կատարման տևողության գաղափարները: Հենքային մոդելում ժամանակի ընթացիկ փոփոխականը՝  $t-n$  իր արժեքը փոխում էր  $t=t+1$  միայն այն պահերին, եթե պրոցեսի կատարման ժամանակ տեղի է ունենում որոշակի պատահար, իսկ ընդլայնված մոդելում այն իր արժեքը փոխում է համաշափ:
- Պրոցեսի ինտերաքտուացիայի ալգորիթմը գուգահեռացվել է: Հենքային մոդելում նույնիսկ գուգահեռ գործույթները ակտիվանում են հաջորդաբար, տարբեր ժամանակային պահերի, որը չի համապատասխանում ստանդարտին:
- Դիտարկված է կատարողների գրադարանության հարցը (եթե աշխատանքները դրվում են հերթի), որը հաշվի է առնելու ինտերաքտուացիայի ալգորիթմում:
- Ցիկլերի մոդելավորման համար ներմուծված է Loop Activity կառուցվածքը: Հենքային մոդելում դիտարկվում են միայն ացիկլիկ պրոցեսները:
- Կատարված է պրոցեսի ինտերաքտուացիայի ալգորիթմի ձևայնացում՝ ներառելով վերը նշված փոփոխությունները և ընդլայնումները:

## §2.2-ում ներկայացված է քննողայնված Workflow մոդելի ձևական նկարագրությունը:

Պրոցեսների բազմությունը նշ.  $W$ : Դիցուք  $N$ ,  $E$ -ն գործույթների և դեկավարման անցումների վերջավոր բազմություններ են: Դիցուք  $C$ -ն դեկավարման անցումներին կցված պրեդիկատների բազմությունն է,  $V$ -ն տվյալների էլեմենտների բազմությունը. իսկ  $DOM(v)$ -ն  $v \in V$  էլեմենտի արժեքների բազմությունը: Նշ.  $H := N \cup W$ :

և արտապատկերումը կամայական գործույթի, պրոցեսի և պրեդիկատի համապատասխանեցնում է  $\text{մուտրային կոնտենտը}$   $i : H \cup C \rightarrow \wp(V)$ ,  $\forall X \in H \cup C : i(X) \subseteq V$ ,  $ca \#(i(X)) < \infty$ :

օ արտապատկերումը կամայական գործույթի, պրոցեսի համապատասխանեցնում է  $\text{լրային կոնտենտը}$   $o : H \rightarrow \wp(V)$ ,  $\forall X \in H : o(X) \subseteq V$ ,  $ca \#(o(X)) < \infty$ :

Կամայական գործույթ հանդիսանում է օպերատոր՝  $A : i(A) \rightarrow o(A)$ :

$Y$ -ով նշ. բոլոր գործույթների բոլոր իրականացումների բազմությունը:  $\Psi : N \rightarrow Y$  արտապատկերումը կամայական գործույթի համապատասխանեցնում է որոշակի  $\text{իրականացում}$ ,  $\Psi(A) : \bigtimes_{v \in i(A)} DOM(v) \rightarrow \bigtimes_{v \in o(A)} DOM(v)$

$\Omega : N \rightarrow P$  արտապատկերումը կամվանենք  $\text{գործույթների կատարողների նշանակում}$ , որտեղ  $P = \{q \mid q : T \rightarrow \wp(Ag)\}$ : Այսինքն  $\forall$  գործույթի կցվում է  $q$  ֆունկցիա, որը ժամանակի տվյալ պահին որոշում է գործույթը կատարող ազենտների բազմությունը:

$E \subseteq N \times N \times C$  բազմությունը կոչվում է  $P \in W$  պրոցեսի  $\text{դեկավարման անցումների}$  բազմություն:  $\langle A, B, p \rangle \in E$ , դեկավարման անցման համար  $p \in C$  պրեդիկատը կոչվում է  $\text{անցման պայման}$   $p : \times DOM(v) \rightarrow \{\text{true}, \text{false}\}, v \in i(p)$ :

Ա գործույթի բոլոր մուտրային, ելքային դեկավարման անցումների բազմությունները նշ.  $A_E^{\leftarrow} := \{e \in E \mid \pi_2(e) = A\}$ ,  $A_E^{\rightarrow} := \{e \in E \mid \pi_1(e) = A\}$ , որտեղ  $\pi_i(e)$ -ն  $e$  կորտեժի  $i$ -րդ կոմպոնենտն է:

Ա գործույթի բոլոր մուտրային, ելքային դեկավարման անցումների պրեդիկատների բազմությունները նշ.  $C^{\leftarrow}(A) := \pi_3(\{e \in E \mid \pi_2(e) = A\})$ ,  $C^{\rightarrow}(A) := \pi_3(\{e \in E \mid \pi_1(e) = A\})$ :

Ա գործույթը կոչվում է  $\text{ցույղավորման}$ , եթե այն ունի մեկից ավելի ելքային դեկավարման անցում: Ցույղավորման գործույթները լինում են AND և XOR տիպի՝  $N^* = N_{\&} \cup N_X^*$ :

Ա գործույթը կոչվում է  $\text{միակցման}$ , եթե այն ունի մեկից ավելի մուտրային դեկավարման անցում: Միակցման գործույթները լինում են AND և XOR տիպի՝  $N_* = N_{\&} \cup N_X$ :

$N_* := N \setminus N_{\&}$  բազմությունը սահմանվում է որպես  $\text{ոեզույաց}$  գործույթների բազմություն:

Դիցուք  $\phi_A^{\&} , \phi_A^X$ -ն հետևյալ բույան ֆունկցիաների բազմություններն են.

$$\phi_A^{\&} := \{ \& p_i \mid p_i \in \{C^{\leftarrow}(A)\} \}, \phi_A^X := \{ \bigvee_{1 \leq i \leq j} p_i \mid p_i \in \{C^{\leftarrow}(A)\} \}$$

Դիցուք  $\phi_A = \phi_A^{\&} \cup \phi_A^X$ : Այդ դեպքում  $\Phi : N \rightarrow \bigcup_{A \in N} \phi_A$  արտապատկերումը որոշում է  $\text{գործույթների միակցման պայմանները}$ , եթե տեղի ունի հետևյալը.

$$\forall A \in N, \Phi(A) \in \phi_A, \forall A \in N_{\&}, \Phi(A) = 1$$

$$\forall A \in N_{\&}, \Phi(A) \in \phi_A^{\&}, \forall A \in N_X, \Phi(A) \in \phi_A^X$$

Հետևյալը  $\Phi(A)$ -ն հետևյալ տիպի պրեդիկատ է  $\Phi(A) : \bigtimes_{p \in C^{\leftarrow}(A), v \in (p)} DOM(v) \rightarrow \{\text{true}, \text{false}\}$ :

ԼՕՈՓ տիպի գործույթների բազմությունը նշ.  $N_{Loop}$ , իսկ  $\phi_A^C$ -ով ցիկլի պայմանը  $A \in N_{Loop}$ :

Դիցուք  $A \in N, B \in N \cup C$ : Հետևյալ արտապատկերումը կոչվում է  $\text{սլյաների հորիզոնական պատճենը}$  արտապատկերում  $\Delta : N \times (N \cup C) \rightarrow \bigcup_{A \in N, B \in N \cup C} \phi(o(A) \times i(B))$ , այն և միայն այն դեպքում, եթե

$$1. \quad \Delta(A, B) \in \phi(o(A) \times i(B))$$

2.  $\Delta(A, B) \neq \emptyset \Rightarrow B$  գործույթը հասանելի է  $A$ -ից

3.  $\forall B \in N : (x, z), (y, z) \in \bigcup_{A \in N} \Delta(A, B) \Rightarrow x = y$

Պրոցեսի սվյայմերի անցումների բազմությունը սահմանվում է հետևյալ կերպ.  
 $\Sigma := \{(A, B, \Delta(A, B)) \in N \times N \times \wp(V \times V) | \Delta(A, B) \neq \emptyset\}$

**W -Պրոցեսի սահմանում:**  $G = \langle V, i, o, N, \psi, C, \Omega, E, \Phi, \Delta \rangle$  կորտեժը կոչվում է  $W$  -Պրոցես, այն բաղկացած է երկու գրաֆից.

1. «Եւկավարման հոսքի գրաֆ  $G_{control} = \langle N, E, V, i, o, C, \Phi \rangle$  (կրճատ՝  $G_{control} = \langle N, E \rangle$ ),

2. Տվյալների հոսքի գրաֆ  $G_{data} = \langle N, \Sigma, V, \Delta \rangle$  (կրճատ՝  $G_{data} = \langle N, \Sigma \rangle$ ):

### §2.3-ում ներկայացված է $W$ -պրոցեսի ինտերակտուացիայի ալգորիթմը.

Պրոցեսի ժամանակը դիտարկվում է որպես դիմում պահերի հաջորդականություն: Կամարենք, որ պրոցեսի աշխատանքը սկսվում է  $t := 0$  պահից:

Կամայական  $X$  -ի  $X \in N \cup W \cup C$  համար ' $i(X)$ '-ով և ' $\sigma(X)$ '-ով նշանակենք մուտքային և ելքային կոնտեյներների արժեքները ինտերակտուացիայի  $t$  պահին:

Պրոցեսի կատարման ժամանակ գործույթների վիճակները արտահայտվում են հետևյալ արտապատկերմամբ  $w : T \times N \rightarrow S_A$ , որտեղ  $S_A = \{\text{«Ակքնական», «Կատարման ենթակա», «Ակտիվացված», «Ավարտված»\} \times \{\text{«Պահիվացված»\}}$ :

Պրոցեսի կատարման ժամանակ արեղիկատների վիճակները արտահայտվում են հետևյալ արտապատկերմամբ  $\xi : T \times C \rightarrow S$ , որտեղ  $S_p = \{\text{«Հաշվարկված», «Չհաշվարկված»\}$ :

Եթե գործույթը դառնում է «Ավարտված», ապա նրա բոլոր ելքային անցումների պրեդիկատները դառնում են «Հաշվարկված»: AND միակցման պայմանը «Հաշվարկված» է, եթե հաշվարկված են բոլոր մուտքային պրեդիկատները, իսկ XOR միակցման պայմանը «Հաշվարկված» է, եթե որևէ մուտքային պայման հաշվարկված է և արժեքը True:

Մուտքային ներկավարման անցումներ չունեցող գործույթը կոչվում է սկզբանական՝  $N' = \{A : A_E^+ = \emptyset\}$ : Οչ սկզբանական գործույթը  $A \in N \setminus N'$  դառնում է «Կատարման ենթակա»՝  $w(t, A) = \{\text{«Կատարման ենթակա»}\}$ ,  $t > 0$  պահին այն և միայն այն դեպքում, եթե

1.  $\exists (X, A, p) \in E : \xi(t, p) = \{\text{«Հաշվարկված»}\}$  և  $\xi(t-1, p) = \{\text{«Չհաշվարկված»}\}$ ,

2.  $A \in N_*$  &  $p(i(p)) = 1$  կամ  $A \in N_*$  &  $\Phi(A)(i(p_1), \dots, i(p_{n_A})) = 1$  և  $\xi(t, \Phi(A)) = \{\text{«Հաշվարկված»}\}$ :

Պահիվ գործույթները, դրանք այն գործույթներն են, որոնք պրոցեսի կոնկրետ կատարման ժամանակ տվյալ պահից սկսած այլևս ենթակա չեն հետագա կատարման:

Գործույթը դառնում է ավարտված  $w(t, A) = \{\text{«Ավարտված»}\} \Leftrightarrow$

1.  $\exists j \in T : j < t \& w(j, A) = \{\text{«Ակտիվացված»}\}$ ,

2.  $\exists k \in T : j < k \leq t$  և  $\Psi(A)$  ավարտվել է (*returned*, այսինքն ֆունկցիան վերադարձել է արժեք):

Սահմանները հետևյալ արտապատկերում ենքը.

$\lambda : T \rightarrow \wp(N) : A \in \lambda(t) \Leftrightarrow w(t, A) = \{\text{«Ավարտված»}\}$ :

$\delta : T \rightarrow \wp(N) : A \in \delta(t) \Leftrightarrow w(t, A) = \{\text{«Պահիվացված»}\}$ :

$\eta : T \rightarrow \wp(N) : A \in \eta \eta(t) \Leftrightarrow w(t, A) = \{\text{«Կատարման ենթակա»}\}, A \in \eta_i \Rightarrow \forall j \neq t, A \notin \eta_j$ :

$\eta \eta : T \rightarrow \wp(N) : A \in \eta \eta(t) \Leftrightarrow w(t, A) = \{\text{«Կատարման ենթակա»}\}$ :

$Ac : T \rightarrow \wp(N) : A \in Ac(t) \Leftrightarrow w(t, A) = \{\text{«Ակտիվացված»}\}$ :

Դիցուր  $A \in \lambda_t \setminus \lambda_{t-1}$ , սահմաններ.

1.  $M(A) := \cup \delta D^\rightarrow(X), X \in A^\rightarrow \cap \delta_i : M(A)$  -ն  $A$ -ին հաջորդող «Պահիվացված»

գործույթներին հաջորդող գործույթների բազմությունն է:

2.  $M_1(A) := \{X \in M(A) | \Phi(X)(\{i(p) | p \in C^{\leftarrow}(X)\}) = 1\} : M_1(A)$  -ն այն գործույթների բազմությունն է, որոնց միակցման պայմանը ճիշտ (*true*) է:
3.  $M_2(A) := \{X \in A_{\rightarrow} | (A, X, p) \in E \& p(i(p)) = 1\} : M_2(A)$  -ն  $A$  -ին հաջորդող բոլոր ռեգուլյար գործույթների բազմությունն է, որոնց մուտքային պայմանը ճիշտ (*true*) է:
4.  $M_3(A) := \{X \in A_{\rightarrow} | \Phi(X)(\{i(p) | p \in C^{\leftarrow}(X)\}) = 1\} : M_3(A)$  -ն  $A$  -ին հաջորդող բոլոր միակցման գործույթների բազմությունն է, որոնց միակցման պայմանը ճիշտ (*true*) է:

$A$  գործույթի սկզբուայ հաջորդողների բազմությունը սահմանվում է հետևյալ կերպ.

 $\Sigma_t(A) = (M_1(A) \cup M_2(A) \cup M_3(A)) \setminus \lambda_t, \quad A \in \lambda_t \setminus \lambda_{t-1}$  համար, իսկ  $\Sigma_t(A) = \emptyset$ , հակառակ դեպքում:

Եթե  $A$  -ն դառնում է «Ավարտված» գործույթ  $t$  պահին, ապա նրա ակտուալ հաջորդողների բազմությունը դառնում է «Կատարման ենթակա»:

### Interpretation(W)

$$t := 0; \eta_0 := N'; \eta\eta_0 := N'; \lambda_0 := \emptyset; \delta_0 := \emptyset; Ac_0 := \emptyset;$$

( $t=0$  պահին «Կատարման ենթակա» գործույթների բազմությունը համընկնում է սկզբնական գործույթների բազմությանը)

### While (true)

$$\{ \quad t := t + 1;$$

$$\lambda_t := \lambda_{t-1} \cup \{A | A \in Ac_{t-1} \& (\Psi(A) \text{ is returned at time } t)\};$$

( $t$  պահին «Ավարտված» են այն գործն, որոնց  $\Psi(A)$  իրականացումը ավարտված է)

$$\delta_t := \delta_{t-1} \cup \{A | w_{t-1}(A) \neq \text{«Պասիվացված»} \& w_t(A) = \text{«Պասիվացված»}\};$$

$$\eta_t := \bigcup_{A \in \lambda_t \setminus \lambda_{t-1}} \Sigma_t(A);$$

( $t$  պահին «Կատարման ենթակա» դարձած գործույթների բազմությունը որոշվում է «Ավարտված» գործույթների ակտուալ հաջորդողների բազմությամբ՝  $\Sigma_t(A)$ )

$$\eta\eta_t := \eta\eta_{t-1} \cup \eta_t \setminus \lambda_t;$$

( $t$  պահին «Կատարման ենթակա» գործույթների բազմությունը)

$$Ac_t := Ac_{t-1} \cup \{A | A \in \eta\eta_t \& \alpha_t(A) \neq \perp\} \setminus \lambda_t;$$

(«Կատարման ենթակա» գործույթները դառնում են «Ակտիվացված» միայն այն դեպքում, եթե ագենտը որոշված է)

$$\text{Forall } A \in Ac_t \setminus Ac_{t-1}$$

$$\{ \text{if } A \in N_{LOOP} \text{ then}$$

Asynch Call Loop\_Interpretation(A) }

$$\text{if } \eta\eta_t = \emptyset \& Ac_t = \emptyset \text{ then exit;}$$

(Եթե «Կատարման ենթակա» կամ «Ակտիվացված» գործույթներ այլև չկան, ապա ավարտել)


}

### Loop\_Interpretation(A)

$$\{ \text{While } (\varphi_C) \{ \text{Call Interpretation}(A_{Body}) \} \}$$

§2.4-ում ներկայացված է ցիկլիկ բիզնես արդեսների մոդելավորման և վերլուծության առևտ խնդիրները և առաջարկվող նոր լուծման մեթոդը:

Բիզնես պրոցեսների մոդելներում ոչ կառուցվածքային ցիկլերի առկայությունը հանգեցնում է ձևական նկարագրման և վերլուծության մի շարք բարդությունների<sup>6</sup>: Այդ պատճառով որոշ հետազոտական աշխատանքներ կատարված են միայն ացիլիկ կամ միայն խիստ որոշակի կառուցվածքի ցիկլերով պրոցեսների համար: Խսկ որոշ հետինակներ՝ առաջարկում են ձևափոխել բիզնես պրոցեսները՝ ցիկլերը դարձնելով կառուցվածքային, բայց առաջարկված մեթոդը կիրառելի է միայն զուգահեռ ճյուղեր չպարունակող ցիկլերի համար:



Ակ.1 Loop Activity

Այդ պատճառով, աշխատանքում առաջարկվում է նոր մոտեցում: Ընդլայնված մոդելուն նոցվել է Loop Activity (Ակ.1) հասուկ տիպի գործույթը՝ համաձայն ստանդարտների: Ֆիկի մարմնն (Body) իրենից ներկայացնում է պրոցեսի ներակառուցվածք (Sub-Flow), որի գործույթները իրենց հերթին կարող են լինել Loop տիպի: Այդպես կարելի է մոդելավորել ներդրված ցիկլերը: Ֆիկի դեկավարումը կարող է լինել FOR, WHILE, REPEAT\_UNTIL տիպի:

Եթե պրոցեսի ցիկլերը մոդելավորված են միայն Loop գործույթների միջոցով, ապա նրա դեկավարման գրաֆը կարելի է դիտարկել որպես ացիկլիկ, որը ունի Loop տիպի գագաթներ: Loop-ի մարմննը ևս կարելի է դիտարկել որպես ացիկլիկ, որը նույնական կարող է ունենալ Loop-եր և այլն:

Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ացիկլիկ պրոցեսների համար մշակված ալգորիթմները ռեկուրսիվ ձևով բնալիքային նաև ցիկլիկ պրոցեսների համար՝ պահպանելով ալգորիթմների բարդությունը:


#### Թեմպազիչների վերլուծուրյան ընթացմուր մեթոդ

1. Եթե պրոցեսը նախագծված է ոչ կառուցվածքային ցիկլերով, ապա կատարել համարժեք ձևափոխություն և դարձնել այն Loop ցիկլերով:
2. Սշակել արդյունավետ վերլուծուրյան ալգորիթմ ացիկլիկ պրոցեսների համար:
3. Ընդլայնել ալգորիթմը Loop ցիկլերով պրոցեսի համար:
4. Կիրառել մշակված ալգորիթմը:

**Տ2.5-ում** ներկայացված է ոչ կառուցվածքային ցիկլերի ձևափոխուրյան մեթոդը և նրա հիմնավորումը: Այն հիմնված է ինտերվալի գաղափարի վրա, որը առաջին անգամ ներկայացվել է Ֆ.Ե.Ալենի և ուղիղների աշխատանքներում<sup>10</sup>, որոնք նվիրված են ծրագրերի օպտիմիզացիային: Ինտերվալը դա մարսնալ ենրագրափ է, որը ունի միայն 1 մուտքային գազար և այդ ենրագրափի կամայական ցիկլ անցնում է այդ գազարով (Ակ.2-ի առաջին մաս):

Մեթոդը բաղկացած է երկու հիմնական բայերից: Առաջին հերթին պրոցեսի դեկավարման գրաֆը սրոհիվ է ինտերվալների հերքարիխայի՝ Ֆ.Ե.Ալենի առաջարկած մեթոդով: Եթե դա հնարավոր չէ (գրաֆը չկրճատվող է irreducible), ապա կատարվում են համարժեք ձևափոխուրյուններ՝ գրականուրյունից հայտնի մեթոդներով<sup>10, 11</sup>, որից հետո ստացվում է կրճատվող (reducible) պրոցես: Հաջորդ քայլով ստացված ինտերվալները ձևափոխվում են Loop-երի:

Ինտերվալի ձևափոխումը (Ակ.2 LT) Loop -ի գրաֆիկական տեսքով ներկայացված է նկար 2-ում, որտեղ  $\varphi_c$  -ն ցիկլի պայմանն է,  $\varphi_1, \varphi_2, \dots, \varphi_k$  -ն ինտերվալի մուտքային գազարից դուրս եկող դեկավարման անցումների պայմաններն են, իսկ  $b_i$ -ն կատարման ընթացքում ցույց է տալիս իր դեկավարման անցումով եթե եղել է թե ոչ:



$$\begin{aligned}\varphi_c &= \varphi_{\text{head}} \& \neg \varphi_{\text{out}} \\ \varphi_{\text{head}} &= \varphi_1 \vee \varphi_2 \dots \vee \varphi_k \\ \varphi_{\text{out}} &= b_1 \vee b_2 \dots \vee b_m\end{aligned}$$

Ակ.2 Ինտերվալի ձևափոխումը Loop-գործույթի

<sup>10</sup>Allen F., Cocke J., "A Program Data Flow Analysis Procedure" IBM Thomas J. Watson Research Center, Communications of the ACM, Vol. 19, No.3 pp 137-147, N. Y. 1976.

<sup>11</sup>Schaefer M., "Mathematical Theory of Global Program Optimization", Prentice-Hall, N.J., 1973.

Պրոցեսը կոչվում է ճիշտ (sound) կառուցված<sup>2</sup>, եթե այն չի պարունակում սինխրոնիզացման սխալներ (deadlocks and lack of synchronization errors): Պրոցեսների կառուցվածքային ճշտության ստուգման վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտական աշխատանքներ և ծրագրային համակարգեր:Այդ խնդիրը դուք է սույն աշխատանքի դիտարկման տիրույթից:

**Թեորիա:** Եթե թիզնես պրոցեսի ղեկավարման գրաֆը կրծատվող է, և ճիշտ կառուցված, ապա LT(W) և W-ն ֆունկցիոնալ համարժեք են՝ LT(W) ⊓ W:

## Ոչ կառուցվածքային ցիկլերով W պրոցեսի ձևափոխումը Loop ցիկլերով պրոցեսի.

- Եթե W-ն ճիշտ կառուցված չէ, ապա ավարտել աշխատանքը:
  - W-ն տրոհել ինտերվալների ինքնարխիայի:  
Եթե W-ն կրծատվող է, ապա անցում կատարել կետ 3-ին,  
հակառակ դեպքում անցում կատարել կետ 2-ին:
  - Կատարել W-ի ձևափոխություն՝ դրանելով այն կրծատվող:  
Եթե ձևափոխությունը հաջողվել է, ապա կրկնել 1 կետը,  
այլապես ավարտել աշխատանքը:
  - Ձևափոխել ինտերվալները Loop -երի:

BIT պրոցեսների գրադարանի ուսումնափրությունը ցույց է տվել, որ ընդամենը մի քանի պրոցեսներ են չկրծատվող, որոնց վրա կիրառելի են հիշատակված մերողները(4-րդ գործի):

**§2.5-ում ներկայացված է ցիկլեր թիզնես պրոցեսների վերլուծության նոր մեթոդը** և նրա առավելությունները: Նոր մեթոդը կայանում է հետևյալում.

- Բերել պրոցեսը կանոնիկ Loop ցիկլերով տեսքի:
- Մշակել վերլուծության ալգորիթմը ացիկլիկ պրոցեսների համար:
- Ընդլայնել ալգորիթմը Loop ցիկլերով պրոցեսի համար:

Հետագա գործներում մշակված են պրոցեսների բնութագրիչների վերլուծության ալգորիթմներ սկզբում ացիկլիկ պրոցեսների համար, այնուհետև դրանք ընդլայնված են Loop ցիկլերով պրոցեսի համար՝ օգտագործելով դիմանմիկ ծրագրավորման մեթոդը:

Ճիշտ կառուցված պրոցեսը կանոնիկ տեսքի բերելու քայլերն են:

- Եթե պրոցեսի ղեկավարման գրաֆը ինտերվալների տրոհվող չէ, ապա կատարել համարժեք ձևափոխություն և բերել այն տրոհվող տեսքի:
- Տրոհել պրոցեսի գրաֆը ինտերվալների:
- Ձևափոխել ինտերվալները Loop գործույթների:

Ներկայացված մեթոդը կիրառվել է BIT գրադարանի վրա, որտեղ ընդամենը մի քանի պրոցեսներ են ինտերվալների չտրոհվող, որոնք հեշտությամբ բերվում են տրոհվող տեսքի:

**Եղբարք զիստ ներկայացված են թիզնես պրոցեսների արտադրողականության բարագրիչների վերլուծության նոր մեթոդներ:**

Առաջարկված են ստուարիկ և դիմանմիկ կրիտիկական ճանապարհների որոնման խնդրի լուծումներ: Ի տարրերություն այս ասպարեզի այլ աշխատանքների՝ դիմանմիկ կրիտիկական ճանապարհների որոշման ժամանակ հաշվի է առնվազ պրոցեսի կատարողների կապերի և վերջնաժամկետի առկայությունը, որը թույլ է տալիս ավելի լավ արդյունքներ ստուար:

Ընդհանուր դեպքում դիմանմիկ կրիտիկական ճանապարհների համար առաջարկված են բավարար պայմանների հիման վրա կառուցված ալգորիթմներ, իսկ միարժեք փոխադրեցություններով պրոցեսների համար խնդիրը լուծված է անբարդությամբ:

Առաջարկված են նաև թիզնես պրոցեսների ժամանակի, եկամուտի, ծախտի, շահույթի քննութագրիչների հաշվարկման ալգորիթմներ: Ներկայացված է մեթոդ, որը շնորհիվ նոդերում ներմուծված Loop կառուցվածքի, թույլ է տալիս ացիկլիկ պրոցեսների համար մշակված վերլուծության ալգորիթմները ընդլայնել և կիրառել ցիկլիկ պրոցեսների համար:

**§3.1.1 –ում ներկայացված է պրոցեսի կաստարողների վերլուծությունը:**

Պրոցեսի կատարողները կարող են լինել կոնկրետ մեքենաներ, ծրագրային միջոցներ, անձիք, կազմակերպություն, դերեր և այլն: Եթե կատարողը չի կարող միաժամանակ կատարել մեկից ավելի գործույթ, ապա այդ գործույթները պետք է դրվեն հերթի, և հետևաբար նրան-

ցից մեկի կատարումը անուղղակիորեն կազդի մյուսի կատարման տևողության վրա՝ այն կիետաձգվի: Այդ տիպի կատարողներին կանվանենք առոմար  $A \in P_A \Rightarrow \forall t \in T, \Omega(A), |t| = 1$ :

**Կատարողների վոլյուսպեցուրյունների գրաֆը** կահմանենք՝  $G_{perf} = \langle N, F \rangle$ , որտեղ

$$F = \{(A_k, A_m) \mid A_k \in N, A_m \in N, A_k \neq A_m, \Omega(A_k) = \Omega(A_m), \Omega(A_k) \in P_A\}$$

Եթե միևնույն առոմար կատարողի գործույթները գունդում են պրոցեսի այլընտրանքային ճյուղերում, ապա կատարման ժամանակ նրանք չեն կարող ազդել միմյանց վրա: Այդ տիպի փոխազդեցուրյունները կոչվում են ավելցուկային:

**Կատարողների վոլյուսպեցուրյան լրճատված գրաֆ** է կոչվում հետևյալ գույքը  $G'_{perf} = \langle N, F' \rangle$ , որտեղ  $F'$ -ը ոչ ավելցուկային փոխազդեցուրյունների բազմությունն է:  $F' \subseteq F$ :

Դիցուք  $Nt$ -ն բնական բվերի բազմություն է, իսկ  $Tn$ -ը ճյուղավորման գործույթների ելքային դեկավարման անցումների հետևյալ համարակալումը.

$$\forall A \in N^x, Tn(A) : A \rightarrow Nt, \forall A \in N^x, Tn(A)(e) = 1 :$$

Կամայական գործույթի կիամապատասխանեցնենք կշիռ՝  $Wg(A)$ , որը պարունակում է  $\langle B, Tn(B)e \rangle$  տիպի բոլոր գույքերը, որտեղ  $B$ -ն ճյուղավորման գործույթ է և  $A$ -ն պատկանում է  $B$ -ի  $Tn(B)e$  -րդ ճյուղին և  $\langle B, All \rangle$ ՝ եթե  $A$ -ն պատկանում է  $B$ -ի բոլոր ճյուղերին:

**Լեմմա:**  $(A, B)$  կատարողների փոխազդեցուրյունը ավելցուկային է, այն և միայն այն դեպքում, եթե  $\exists C \in N^x, \exists n \in Nt, m \in Nt, n \neq m$ , այնպիս որ

$$\langle C, n \rangle \in Wg(A), \langle C, m \rangle \in Wg(B) \text{ և } \langle C, n \rangle \notin Wg(B), \langle C, m \rangle \notin Wg(A) :$$

**Փոլյուսպեցուրյան լրճատված գրաֆի ստացում** (ալգորիթմի հիմնական քայլերը)

1. Ընթացիկ բաժանում:

$$Level(i) = \{A \mid DistanceFromStart(A) = i\}$$

2.  $Wg$  կշիռների վերաբրում:

Յուր հաջորդ շերտի կշիռները հաշվարկվում են նախորդ շերտերի կշիռների հիման վրա:

3. Ոչ ավելցուկային փոխազդեցուրյունների ստացում:

Կատարվում է նախորդ լեմմայի պայմանների ստուգում

Ալգորիթմի բարդությունը  $O(|F| + |N| \cdot MxE^3 \cdot |N_x^x|)$  է, որտեղ  $MxE$ -ն գործույթների մաքսիմալ ճյուղավորումների քանակն է: Ալգորիթմի կոռեկտությունը ապացուցված է:

